

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ

բ.գ.թ.

ՄԵՏԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՍԱՆՏԻԿԱԿԱՆ ՀԵԳԵԼԱՆՔԸ*

«Խորհրդածումը¹ խորհրդածման մասին»² մեծ տեղ է զբաղեցնում Ֆրիդրիխ Շլեգելի վաղ տեքստերում: Խորհրդածումը, ըստ նրա, ինքնին տեղի ունեցող գործընթաց չէ. դա մի բան է, որն իր հերթին պահանջում է խորհրդածում: Շլեգելը նման բազմապատկող խորհրդածման հետևանքներն ու խնդիրները մանրամասն արծարծում է իր աֆորիզմներում:

Ժամանակակից գրականագիտության մեջ խորհրդածման ակտերի բազմապատկման խնդիրն իրենից ներկայացնում է բացառիկ հետաքրքրություն ոչ միայն «գրականության պատմության» դիտանկյունից, այլև լույս է սփռում «մետալեզվի» գաղափարի վրա, որը դեռևս 20-րդ դարի 30-ականներին առաջադրվել է Ստանիսլավ Լեսնիևսկու, Ալֆրեդ Տառսկիի և Ռուդոլֆ Կառնապի կողմից՝ ինքնաանդրադարձի որոշ պարադոքսներ ու խնդիրներ լուծելու նպատակով³: Այս խնդիրներն անտարակուսելիորեն այսօր ևս կարևորվում են «մետականացման» արդի տեսությունների համար:

Սույն հոդվածը միտված է անդրադառնալու ռոմանտիկական գրականության նպատակներին ու խնդիրներին, նրան ներկայացվող պահանջներին, մետագրականության և ռոմանտիկական գրականության աղբյուրներին, մասնավորապես վերջինիս ներդրումը «մետա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 06.02.2019:

1 կամ ինքնառեֆլեքսիան

2 Schlegel, Friedrich: Kritische Friedrich-Schlegel-Ausgabe. Hrsg.v.Ernst Behler unter Mitwirkung von Jean-Jacques Anstett u. Hans Eichner. [Bisher:] Bd. 1-14, Bd.16-23. Padeborn u.a.: Schöningh und Zürich: Thomas 1958-1995. Bd.18. S.320.

3 Հմմտ. Schüttelz. Erhard: Objekt- und Metasprache. In: Jürgen Fohrmann/Harro Müller (Hrsg.): "Literaturwissenschaft". München: Fink 1995, S. 179-216, S. 180f.

գրականության» տեսության զարգացման հարցում, Շլեգելի՝ ռոմանտիկական հեգնանքի տեսության կիրառմանը դրամատիկական երկում, մասնավորապես Քրիստիան Դիտրիխ Գրաբեսի «Կատակ, երգիծանք, հեգնանք և խորը նշանակություն» գործում:

«Մետականացման» հասկացույթը, ինչպես նաև նրա տեսությունները Շլեգելի և 18-րդ դարի այլ հեղինակների տեքստերի դիտանկյունից ավելի քան խնդրահարույց են: Շլեգելն այս առումով ոչ թե այն փաստն է մատնանշում, որ գրականությունը խորհրդածում է սեփական մտացածին լինելու և իր գրական տեխնիկաների մասին, այլ ավելի շուտ այն, որ գրական լեզուն իրենից ներկայացնում է հիասքանչ վայր՝ խորհրդածման հնարավորություններն ընդհանուր առմամբ արծարծելու համար: Շլեգելի «ռոմանտիկական» տեքստն այս իմաստով ոչ միայն պարզապես *ինքնախորհրդածող է*, այլ այն հարց է բարձրացնում *ինքնախորհրդածման* հնարավորությունների, ինչպես նաև *ինքն իր* մասին:

Ֆ. Շլեգելի բազմիցս մեջբերվող «Աթենեում» ամսագրի 116-րդ դրվագը ռոմանտիկական «պոեզիային» կոչ է անում մտաարտացոլվել ցանկացած ժամանակ: Վերջինս, ըստ Շլեգելի, ունակ է «էպոսի պես դառնալու ամբողջ շրջապարող աշխարհի հայելին, դարաշրջանի հայելին: Այնուհանդերձ, այն իրական և իդեալական հետաքրքրություններից բացի կարող է ձախրել նաև պոետիկական խորհրդածման թևերի վրա հենց ամենաշատը պատկերվածի ու պատկերողի միջև, այս խորհրդածումը նորից ու նորից բազմապատկել, ինչպես հայելիների անվերջանալի մի շարքում»⁴:

Հենց այս խոսքում են արծարծվում Շլեգելի գրականության տեսության հիմնական գաղափարները: Համաձայն վերոնշյալի՝ գրականությունը փորձում է պատկերել ու արտացոլել «*շրջապատող աշխարհը*» որպես «*հայելի*», սակայն միաժամանակ և «*ամենաշատը*» նա կարող է «*ինքն իր*» առջև պահել հայելին, լույսի շողը իր վրա նետել /«*խորհրդածել*»/ և իր մասին գիտություն ձեռք բերել: Հետևաբար ռոմանտիկական գրականությունը ոչ միայն պարզապես «պոեզիա» է, այլ նաև միաժամանակ գիտություն է պոեզիայի *մասին*: Եթե գրականությունը՝ *ինքն իր մասին* գիտությունը, որպես պահանջ է ներկայացնում, ապա այդ իմացությունը այն այլևս չի կարող ըմբռնել որպես պո-

4 Schlegel 1958-1995. Bd.2, S.182f.

ետողգիական իմացություն, քանի որ այդ դեպքում նա ոչ միայն ներառում է գիտություն իր մասին, այլև, եթե ցանկանում է արտացոլել *ինքն իրեն*, ապա պետք է իմանա, թե ինչ է նշանակում իր մասին գիտենալը: Այն ոչ միայն կարող է ինքն իրեն արտացոլել, այլև միաժամանակ պետք է պատկերի, թե ինչ է *նշանակում* ինքն իրեն պատկերելը: Բավական չէ, որ այն ունենա «պոետողգիական իմացություն» գրական տեխնիկաների և ոճերի վերաբերյալ: Երա առաջադրանքը շատ ավելի նշանակալի է և ունիվերսալ: Այդ առումով Մորիս Բլանշոն նշում է, որ ինքնախորհրդածող պոեզիայի պահանջի դեպքում խոսքն «այլևս պոետողգիայի, ինչ-որ երկրորդական իմացության մասին չէ. բանը պոեզիայի սրտի մեջ է, իմացության առ այն, որ խոսքը նրա էության մասին է, որը փնտրտուքն ու ինքնափնտրումն են»⁵:

Այն, որ Շլեգելի՝ «խորհրդածող» գրականության պահանջն ավելին է, քան խորհրդածումը գրական ձևերի և ոճերի մասին, արժանի է հատուկ ուշադրության այն պատճառով, որ այս առումով առկա են եղել որոշ թյուրըմբռումներ ու աղճատված վերլուծություններ: Բավական ազդեցիկ աշխատությունների մեջ «ռոմանտիկական հեզնանքը» բացառապես նկարագրվել է որպես խորհրդածում գրական տեքստերի մասին գրական տեքստի տիրույթում⁶: Նման մեկնության հետևանքով «մետամտացածինի» կամ «մետագրականության» արդի տեսություններն արծարծում են վերջիններս բացառապես որպես գրական /կամ առնվազն գեղարվեստական/ ինքնախորհրդածման տարատեսակներ⁷: Շլեգելի դրվագների նման սահմանափակ մեկնաբանությունն սկզբունքորեն հաղթահարվեց միայն «պոստստրուկտու-

5 Blanchot, Maurice: Das Athenäum. In: Volker Bohn (Hrsg.): "Romantik. Literatur und Philosophie. Internationale Beiträge zur Poetik". Frankfurt a. M.: Suhrkamp 1987, S. 110.

6 Հմմտ. Strohschneider-Kohrs, Ingrid: Die neuromantische Ironie in Theorie und Gestaltung. Tübingen: Niemeyer 1977. [1960], S. 7-53; Konersmann, Rolf: Lebendige Spiegel. Die Metapher des Subjekts. Frankfurt a.M.: Fischer 1991, S. 208-213; Behler, Ernst: Frühromantik. Berlin/New York: de Gruyter 1992, S. 245-252; Behler: Ironie und literarische Moderne. Paderborn u.a.: Schöningh 1997, S. 92-114.

7 Հմմտ., օրինակ, Scheffel, Michael: Formen selbstreflexiven Erzählens. Eine Typologie und sechs exemplarische Studien. Tübingen: Niemeyer 1997. S. 54-90.

8 «Պոստստրուկտուրալիստական» տեսությունների, մասնավորապես Ժակ Դերրիդայի և Պաոլ դե Մանի առնչությունը Ֆ. Շլեգելի վաղ տեքստերին առանձին ուսումնասիրության առարկա է: Սրա վերաբերյալ հմմտ. Menninghaus, Winfried: Unendliche Verdoppelung. Die frühromantische Grundlegung der Kunsttheorie im Begriff absoluter Selbstreflexion. Frankfurt a.M.: Suhrkamp 1987, S. 115-131; Wellbery Wellbery, David E.: Rhetorik und Literatur. Anmerkungen zur poetologischen Begriffsbildung bei

րալիստական» հեռանկարից⁶: Նշենք նաև, որ Շլեգելի՝ գրական տեքստի ինքնահայեցման պահանջը տեղիք է տալիս հետագա բարդությունների: Ինքնախորհրդածման համեմատությունն ինքնարտացոլվող հայելու հետ միաժամանակ մատնանշում է այն փաստը, որ գրականության՝ ինքն իր փնտրումն անվերջանալի գործընթաց է: Ուստի ինքն իրեն ձանաչելու փորձը պարտադիր առաջադրանք է մնում գրականության համար: Ինքն իրեն հայեցող գործընթացի անավարտ լինելու փաստն ընկած է խորհրդածման տրամաբանության հիմքում:

Քանի որ խորհրդածումն «ինքն իրեն» բաժանում է երկու մասի, մասնավորապես խորհրդածողի և խորհրդածածի, հայեցման ընթացքում խորհրդածման տեսանկյունից անուշադրության է մատնվում այն մասը, որը խորհրդածում է և չի խորհրդածվում: Այս իմաստով Շլեգելը խոսում է այն բանի մասին, որ ռոմանտիկական գրականությունը «կարող է ծախսել [...] պատկերվածի և պատկերվողի միջև, քանի որ այն կանգնած է երկուսը *միաժամանակ* իր հայացքի մեջ պահելու աներևակայելի առաջադրանքի առջև»։ խորհրդածումն «ինքն իրեն» չի կարող պատկերել, քանի որ այն անհրաժեշտաբար փոխակերպում է ու բազմապատկում:

Գրականության խնդիրը, ըստ Շլեգելի, բառացիորեն «մետա-խորհրդածումն» է: Գրականությունն ինքն իրեն է *արտացոլում*, սակայն, թեև նա նույնպես պետք է արտացոլի ինքնին արտացոլումը, քանի որ արտացոլանքի գործընթացը կրկնապատկում ու բազմապատկում է արտացոլվածը, խորհրդածումը վերածվում է «*բազմապատկման*» ու «*բազմապատկվում է, ինչպես հայելիների մի անվերջանալի շարքում*»:

Խորհրդածումների մասին իրենց խոհերով «ռոմանտիկ» հեղինակներն ուրույն ներդրում կատարեցին «մետագրականության» տեսության զարգացման հարցում: Ռեֆլեքսիայի «դասական» տեսություն-

Friedrich Schlegel. In: Ernst Behler/Jochen Hörisch (Hrsg.): Die Aktualität der Frühromantik". Paderborn u.a.: Schöningh 1987, S. 161-173; Choi, Moon-gyoo: "Frühromantische Dekonstruktion und dekonstruktive Frühromantik": Paul de Man und Friedrich Schlegel. In: Karl Heinz Bohrer (Hrsg.): Ästhetik und Rhetorik. Lektüren zu Paul de Man. Frankfurt a.M.: Suhrkamp 1993, S. 181-205; Schumacher, Eckhard: Die Ironie der Unverständlichkeit. Johann Georg Hamann, Friedrich Schlegel, Jacques Derrida, Paul de Man. Frankfurt a. M.: Suhrkamp 2000, S. 259-337; Krahenbühl, Franziska: Kritik an der Reflexion. Die Spiegelssymbolik bei Friedrich von Hardenberg und Jacques Derrida. In: Paul Michael (Hrsg.): "Präsenz ohne Substanz. Beiträge zur Symbolik des Spiegels". Zürich: Pano 2003. S. 123-139.

նը, որը լուսաբանվում է «մետագրականության» կամ «մետամտացածինի» արդի տեսություններում, ելնում է այն բանից, որ տեքստը /նախկինում այն կանվանեին «ոգի»/ խորհրդածում է ինքն իր մասին և ի վերջո պատկերում է խորհրդածման արդյունքը: Ըլեգելը և ռոմանտիկները, ի դեպ, չեզոքացնում են այս երևույթի ժամանակային հետևանքը: Վինֆրիդ Մեննինգհաուզն այս առումով նշում է հետևյալը. «Հայեցումը, խորհրդածումը [...] ավելի շուտ ստեղծում են ռեֆլեքսիայի գորընթացը [...], սակայն նախևառաջ երկուսը՝ խորհրդածածին և խորհրդածվողին»⁹: Սրանով նա գալիս է այն եզրահանգման, որ ռեֆլեքսիան ավելի շուտ անվերջանալի, քան միանգամյա գործընթաց է:

Ըլեգելն ավելի վաղ շրջանի՝ «Հունական պոեզիայի ուսումնասիրության մասին» խորագրով տեքստում իր դատողությունների հիման վրա ստեղծում է պատմափիլիսոփայական տարբերակում «անտիկի» և «մոդեռնիստականի» միջև: Նա մասնավորապես ելնում է այն դրույթից, որ անտիկ արվեստը ես-ի և աշխարհի միջև «բնական» կապի արտահայտումն է, մինչդեռ մոդեռնիստականն արտապատկերում է բանականության ազատագրումը, որն իրողությունները տարանջատում է վերլուծաբար, տարբերակում է դրանք ու քննության ենթարկում: Դա ամբողջությամբ փոխում է ամեն ինչ. ամբողջական ու միասնական, ամեն ինչի միջև կապ հաստատող, ներդաշնակ անտիկ աշխարհը փլուզվում է, դրա փոխարեն ընթացք է ստանում մի բաց զարգացում: «Մեկուսացնող բանականությունը», գրում է Ըլեգելը, «սկիզբ է առնում այն բանից, որ տարանջատում ու մեկուսացնում է բնության ամբողջականությունը»¹⁰. Ավելի ուշ շրջանի իր գրառումներում նա հակիրճ նշում է. դասականը = ստատիկի, սինթետիկի (fix, [syn]th[etisch]), պրոգրեսիվը՝ = շարժականի, անալիտիկի (bewegt, anal[ytisch])¹¹:

Եթե մոդեռնիստական /կամ պրոգրեսիվ/ արվեստին բնորոշ է միասնություն, ապա այն առաջանում է միայն բանականության միջոցով: Բանականությունը նոր վերլուծական գործընթացի ու ինքնավերաբերության միջոցով պետք է փորձի գտնել միասնությունը, որը խաթարվել է իր իսկ վերլուծական բնույթի պատճառով: Ժամանակակից արվեստը

⁹ Menninghaus, ebd., S. 26.

¹⁰ Schlegel 1958-1995, Bd. 1, S. 245.

¹¹ Schlegel, Friedrich: Literarische Notizen 1797-1801. Literary Notebooks. Hrsg. v. Hans Eichner. Frankfurt a.M./Berlin/Wien: Ullstein 1980. S. 109.

Շլեգելի համար նաև մշտապես ու պարտադիր «մետաարվեստ» է: «Աթենեումի» արդեն մեջբերված 116-րդ դրվագում այս միտքը Շլեգելը վերածում է «*տրանսցենդենտալ պոեզիայի*» պահանջի, որն իր բոլոր պատկերումներում պետք է պատկերի ևս ինքն իրեն և միաժամանակ ամենուրեք հանդես գա որպես պոեզիա ու պոեզիայի պոեզիա¹²:

Վերոնշյալից կարելի է հետևեցնել, որ այս ինքնախորհրդածող «տրանսցենդենտալ պոեզիան» երբեք չի կարողանալու լուծել *ինքն իրեն պատկերելու* խնդիրը: Թեև նա կարող է ինքնապատկերման փորձ ձեռնարկել, սակայն այս «ինքը» (Selbst) պարզապես գոյություն ունեցող չէ. այն պետք է ստեղծվի խորհրդածման գործընթացում: Ինքնաարտացոլման գործընթացում բանականությունը բազմապատկվում է խորհրդածողով և խորհրդացածով: Քանի որ խորհրդացած պատկերը հենց այնպես չի կարող պատկերել խորհրդածող մասը, այն ռեֆլեքսիայի համար մնում է անհասանելի՝ դրանով իսկ խորհրդածման միջոցով «սեփական» միասնության պատկերման փորձը մատնելով ձախողման: Ուրիշ *խոսքով՝ ռեֆլեքսիան բաց է թողնում ինքն իրեն*:

Ռեֆլեքսիայի սինթեզը չի կարող տևականորեն տեղի ունենալ. ռեֆլեքսիայի հաջորդ ընթացքը պետք է փորձի միասնություն ստեղծել ավելի բարձր մակարդակի վրա: Այդպես ընթացքի մեջ է գցվում անվերջանալի մի շարժում:

Արտացոլումը «արտացոլելու» ձախողվող փորձը առաջ է բերում ոչ միայն «երկրորդ հայելին», այլև մշտապես հետագա, լրացուցիչ հայելիներ: Եվ միայն այն ժամանակ, երբ ես-ն այլևս չի արտացոլում, այլ *տեսնում է* մասնավորապես իր սեփական տեսնելը, այդ դեպքում ռեֆլեքսիայի անվերջանալիությունը կարող է ավարտվել *հայեցման* միջոցով:

«*Ձուտ ռեֆլեքսիան*», այսպիսով, որոշակի խստությամբ նշում է Ծելլինգը, «մարդու խանգարվածություն է, իսկ երբ նա մարդուն ամբողջությամբ է տիրում, արմատից քանդում է իր բարձրյալ գոյը, իր հոգու կյանքը, որը բխում է վերջինիս ինքնությունից»¹³: Ֆիխտեն փոր-

12 Schlegel 1958-1995. Bd.2, S.203.

13 Schelling, Friedrich Wilhelm Joseph: Ideen zu einer Philosophie der Natur als Einleitung in das Studium dieser Wissenschaft. [1797]. In ders.: "Schriften von 1794-1798." Univer. reprograf. Nachdruck. Ausg. Stuttgart und Augsburg, Gotta, 1856-57. Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft 1980 [1975], S. 333-398, S. 337; NÜÜi. Menninghaus 1987, S. 55.

ծում է խոյս տալ այս «խանգարվածությունից»՝ փոխարինելով *արտացոլումը տեսնելով*: Այսպես, նա գրում է. «[...] *ՏԵՄԵԼԸ, մասնավորապես ԻՆՔՆ ԻՐԵՆ ՏԵՄԵԼԸ*՝ այս դիտողության մեջ է այլ փիլիսոփայական համակարգերի սխալմունքների պատճառը, այդ թվում՝ Կանտինը: Երանք դիտարկում են ես-ը՝ որպես մի ՀԱՅԵԼԻ, որում արտացոլվում է պատկերը, սակայն այս դեպքում հայելին ինքն իրեն չի տեսնում, այդ պատճառով մի ՀԱՅԵԼՈՒ համար ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԵԼԻ է հարկավոր և այլն: Դրանով ՀԱՅԵՑՈՒՄԸ չի բացատրվում, այլ միայն՝ ԱՐՏԱՑՈՒԼԱԲԸ: Ես-ը գիտության=ուսմունքի մեջ, հակառակ դրան, հայելի չէ, այլ *աչք է*. այն ԻՆՔՆ ԻՐԵՆ ԱՐՏԱՑՈՒԼՈՂ ՀԱՅԵԼԻ Է, ինքն իր պատկերը, *ինքն իրեն տեսնելու միջոցով աչքը /ԻՆՏԵԼԵԿՏԸ/ դառնում է իր իսկ պատկերը*»¹⁴:

Այսպիսով, արտացոլանքի՝ ինքն իրեն «արտացոլելու» ձախողվող փորձն առաջ է քաշում ոչ միայն երկրորդ հայելու գաղափարը, այլև մշտապես այլ լրացուցիչ հայելիների ու արտացոլումների: Միայն երբ ես-ը այլևս չի «արտացոլում», այլ *տեսնում է* մասնավորապես իր սեփական տեսնելը, միայն այս դեպքում հայեցման միջոցով կարող է ավարտվել ռեֆլեքսիայի անվերջանալիությունը: Շլեգելը, սակայն, ռեֆլեքսիայից դուրս գալու փնտրտուքի հարցում չի հետևում Ֆիխտեին: Երբ նա գրում է, որ ռոմանտիկական «պոեզիան մշտապես պետք է բազմապատկի իր ռեֆլեքսիան և, *ինչպես հայելիների անվերջանալի մի շարքում, բազմացնի այն*», ապա Ֆիխտեի կողմից խուսափվող ու Շելլինգի կողմից «խանգարվածություն» անվանված արտացոլումների անվերջանալիությունը դառնում է յուրաքանչյուր ինքնավերաբերության սկզբունք և պոետոլոգիական չափանիշ¹⁵:

Հարց է առաջանում, թե որքան է հնարավոր Շլեգելի «*պոեզիայի պոեզիան*» բնութագրել որպես «մետագրականություն»: Վերոնշյալ-ծից բխում է երկակի ու պարադոքսալ մի հետևություն. մի կողմից, ըստ Շլեգելի, մոդեռնիստական գրականության ներքո *յուրաքանչյուր*

14 Fichte, Fichte, Johann Gottlieb: Gesamtausgabe der bayrischen Akademie der Wissenschaften. Hrsg.v.Reinhard Lauth/Hans Gliwitzky. Stuttgart-Bad-Cannstatt: Frommann 1978. Bd.4/2, S. 86f.; NÜÜ. Wellbery 1996, S. 60)

15 Հմմտ. Hamacher 1998, Hamacher, Werner: Der ausgesetzte Satz. Friedrich Schlegels poetologische Umsetzung von Fichtes absolutem Gegensatz. In ders.: "Entferrtes Verstehen. Studien zu Philosophie und Literatur von Kant bis Celan". Frankfurt a.M.: Suhrkamp 1998, S. 206.

տեքստ և յուրաքանչյուր գեղարվեստական գործ պետք է խորհրդածի իր մասին՝ միասնության և ամբողջականության հասնելու համար, մյուս կողմից՝ կրկին *յուրաքանչյուր տեքստի* և յուրաքանչյուր գեղարվեստական գործի համար *անհնարին* է խորհրդածել իր մասին, քանի որ բազմապատկող ռեֆլեքսիվության գործընթացը երբևէ չի կարող հասնել սեփական ես-ին: Մետագրականությունը հետևաբար թե՛ պարտադիր է և թե՛ անհնարին. այն խիստ պահանջված է, սակայն միաժամանակ նաև անհասանելի: Պարադոքսն այն է, որ գրականությունը, անկախ իր ժանրից, պետք է լինի մետագրականություն, սակայն, ինչպես արդեն նշեցինք, մետագրականությունը միևնույն ժամանակ գոյություն չունի:

Հետևելով Զլեգելին՝ պետք է որ ասվեր հետևյալը. *քանի որ* գրականությունն անկարող է *ինքն իրեն* արտացոլելով պատկերել, այն կարող է և պետք է պատկերի ռեֆլեքսիայի անհասանելիությունը: Դրա արդյունքում առաջանում է *բացասական* մետառեֆլեքսիա, որն ինքն իրեն հասնելու անկարողության միջոցով խորհրդածում է խորհրդածման համար:

Նեգատիվ ռեֆլեքսիայի այս ձևը Զլեգելն անվանում է *հեզնանք*: Նա վճռականորեն փոխակերպում է հեզնանքի ավանդական հոետորիկ ըմբռնումը: Գեղագետը դուրս է գալիս հեզնանքի՝ որպես հոետորիկ գունեղության միջոցի սահմանումից, որի համաձայն՝ վերջինս նշանակում է Ա ասելը և Բ նկատի ունենալը: Զլեգելը հեզնանքի տակ հասկանում է լեզվի ընդհանուր հատկությունը, ինչպես նաև լեզվի վերաբերմունքը խոսողի հանդեպ: Նրա համար հեզնանքը ոչ այլ ինչ է, քան հանելուկ, որն անհնար է կռահել. «Նա, որ դա չունի, չի կարող ընկալել այն նաև ամենապարզ բացահայտումից հետո»¹⁶: Հեզնանքը նախևառաջ այն պատճառով է առեղծված, որ հնարավորություն չի ընձեռում «բուն» նկատի ունեցածը ասվածի մեջ բացահայտելու: Այն անհնարին է դառնում, քանի որ հեզնանքն ապակայունացնում ու թաքցնում է տարբերությունը կատակի և լրջության միջև: Այսպիսով, հեզնանքը, համաձայն դասական հոետորիկ ըմբռնման, լուրջի հականիշը չէ: Փոքր-ինչ հեզնորեն ասած՝ Զլեգելի համար հեզնանքը նշանակում է խոսել լեզվի իր իսկ նկատմամբ պարտադիր ու մշտական *հակասության* ձևի ներքո, որը յուրաքանչյուր կատակ որպես մի

16 Schlegel 1958-1995, Bd. 2, S. 160.

լուրջ բան և յուրաքանչյուր լուրջ բան որպես կատակ կարող է ներկայացնել: Ըլեգելը 48-րդ *քննադատական դրվագում* նկատում է, որ «հեզնանքը պարագործի ձև է»¹⁷: Քանի որ հեզնանքի հնարավորությունը երբեք չի կարող բացառվել, ապա յուրաքանչյուր «լուրջ» արտահայտություն պետք է հաշվի առնի, որ այն կարող է վերածվել զուտ կատակի: Սրանով հեզնանքը վերածվում է լեզվի որոշակի հատկանիշի: Հանս-Յոզեֆ-Ֆրեյն այս նկատառումով գրում է հետևյալը. «Հեզնանքը մի բան չէ, ինչը հակադրվում է լուրջ արտահայտությանը, այլ այն նշանակում է, որ վերջինս միշտ չեղարկվում է: Ուստի այն լուրջի հակադիր դիրքորոշումը չէ, այլ՝ յուրաքանչյուր դիրքորոշման չեղյալ համարումը»¹⁸: Կրկին անդրադառնալով Ըլեգելին՝ նշենք, որ հեզնանքը, նրա կարծիքով, խոսողի համար լեզվի անսանձարձակությունն է»: Այն, ինչպես նա նշում է *Անհասկանալիի մասին* իր գործում, կարող է դառնալ «վայրի», «երբ առանց հեզնանքի խոսում են հեզնանքի մասին, ինչը հենց այս պահին տեղի ունեցավ, երբ հեզնանքով են խոսում հեզնանքի մասին՝ առանց նկատելու, որ միևնույն ժամանակ մարդն ավելի աչքի ընկնող հեզնանք է դրսևորում, երբ մարդն այլևս չի կարող դուրս պրծնել հեզնանքից, ինչպես այն տեղի է ունենում անհասկանալիի մասին այս փորձում, երբ հեզնանքը դառնում է գրելառձ, որը միաժամանակ արհամարհում է պոետին [...], երբ հեզնանքը դառնում է վայրի և իրեն այլևս տիրապետել չի տալիս»¹⁹:

Հեզնանքը Ըլեգելի համար ոչ միայն «վայրի» դառնալու և խոսողի կողմից չտիրապետվելու լեզվական հատկություն է. այն միաժամանակ այդ անտիրապետելիության ընկալումն է, որը երբևէ չի կարող դառնալ հաստատուն գիտելիք վերջինիս մասին: Սակայն, ինչպես նշվեց, նա, ով «*հեզնանքով է խոսում հեզնանքի մասին*», կարող է առանց նկատելու, «*ավելի աչքի ընկնող հեզնանք դրսևորել*»: Հեզնանքը լեզվի «վայրի լինելու մասին» իմացության հնարավորություն է ընձեռում, սակայն, քանի որ այս իմացությունը ձևավորվում է լեզվի տիրույթում, այն պետք է ազդեցության տակ գտնվի «*այլ*» հեզնանքի կողմից: Հեզնանքը չի հանգեցնում դրական գիտելիք ապահովելուն. նրան համապատասխանում է բացասական գիտելիքը լեզվի տիրույ-

17 Schlegel 1958-1995, Bd. 2., S. 153.

18 Frey, Hans-Jost: Über das Spiel. In: ders.: "Der unendliche Text". Frankfurt a.M.: Suhrkamp 1990, S. 263-294, S. 273.

19 Schlegel 1958-1995, Bd. 2, S. 369.

թում գտնվող ճանաչելիության և արտահայտված լինելու սահմանների մասին:

Ուստի հեզնոդը նա չէ, ով հեզնանքը օգտագործում է որպես լեզվական միջոց, այլ լավագույն դեպքում նա, ով գիտի, որ իշխանություն չունի իր լեզվի վրա: Այս իմացությանը տիրապետելու համար խոսողն ինքն իրենից պետք է ձեռք բերի որոշակի հեռավորություն և կարողանա իր լեզուն զննի, կարծես այն լինի այլ մեկինը: Մինչդեռ խոսողն անխուսափելիորեն կրկին ու կրկին զարմանում է իր արտահայտությունների վրա. սեփական լեզվի վրա իշխանություն չունենալու գիտակցությունն ավելի ու ավելի է նպաստում լեզվից դիստանցիա ձեռքբերելուն: Իր «*Լեզվի և խոսքի փոխտոփայության մասին*» խորագրով ուշ շրջանի դասախոսության մեջ Շլեգելը գրում է, որ հեզնանքը «ոչ այլ ինչ է, քան մտածող ոգու զարմանքը ինքն իր վրա»²⁰: Այստեղ առաջ է քաշվում ռեֆլեքսիայի ընդհանուր կառուցվածքը. ես-ը բաժանվում է խոսողի ու ընկալողի, և յուրաքանչյուր ռեֆլեքսիվ գործընթաց բազմապատկում է այս բաժանումը՝ այն փակելու փոխարեն: Հակառակ այն բանի, ինչ նշում է Մանֆրեդ Ֆրանկը²¹, Շլեգելի համար հեզնանքը ես-ի ռեֆլեքսիվ դիալեկտիկայի մասը չէ. այն առաջ է մղում ռեֆլեքսիվ մի գործընթաց, որում նա առաջացնում է ես-ի *զարմանք ինքն իր վրա*, սակայն, ինչպես արդեն նշվել է, այն նաև պարունակում է գիտություն ռեֆլեքսիայի պարտադիր ձախողման մասին, քանի որ ապակայունացնում է և դրա հակադրությանն է վերածում ես-ի միասնության մասին յուրաքանչյուր ռեֆլեքսիվ արտահայտություն: Մինչդեռ հեզնանքը միաժամանակ առաջացնում է ու խաթարում ռեֆլեքսիան, այն Շլեգելի ռեֆլեքսիայի մասին տեսության մեջ ոչ թե օրինակ է, այլ ավելի շուտ՝ *նրա ձևույթը*:

Շլեգելի մետառեֆլեքսիվ գրականության պահանջը և նկարագրությունը՝ որպես «ռոմանտիկական հեզնանքի» հասկացույթ, իր ժամանակի գրականության համար, անկասկած, կարևոր խթան էր: Ընդ որում, գոյություն ունեն շատ մեթոդներ, որոնք նկարագրում են այն, թե ինչպես են գրական տեքստերը «վարվում» Շլեգելի կողմից նկա-

20 Schlegel 1958-1995. Bd. 12, S. 353.

21 Հմմտ. Frank, Manfred: Einführung in die frühromantische Ästhetik. Vorlesungen. Frankfurt a. M.: Suhrkamp 1989, S. 287-306, Frank, Allegorie, Witz, Fragment, Ironie. Friedrich Schlegel und die Idee des zerrissenen Selbst. In: Willem van Reijen (Hrsg.): "Allegorie und Melancholie". Frankfurt a. M.: Suhrkamp 1992, S. 124-146.

րագրված ռեֆլեքսիայի համար ես-ի անհասանելիության գաղափարի հետ:

Քրիստիան Դիտրիխ Գրաբեյի «Կատակ, երգիծանք, հեզնանք և խորը նշանակություն» (1827) գործն իր խորագրում արտացոլում է ումանտիկական պոետոլոգիայի կենտրոնական բառերը: Ռոմանտիկական հեզնանքի կենտրոնական մոտիվն ականառու է անգամ մակերեսային ընթերցանության ընթացքում. այսպես, օրինակ, պարեքբազը²², որը՝ որպես հեզնանքի ոճական միջոց, կենտրոնական դեր է խաղում Լյուդվիգ Տիկի կատակերգություններում: Որպես *պարեքբազ* /կամ պարաբազիս, հարաբազիս/ Շլեգելն անտիկ կատակերգության մասին իր նշումներում նկարագրում է «երկի սկզբունքորեն ընդհատումը և ոչնչացումը, ուր, ինչպես այս գործում, ամենամեծ անսանձարձակությունն է տիրում, և մինչ նախաբեմի ծայրահեղ սահմանը առաջ մղված երգչախմբի կողմից ժողովրդին հասցեագրվում են ամենամեծ կոպտությունները: Հենց այս «առաջ դուրս գալու» երևույթից է բխում այս անվանումը»²³

Պարադոքսալ ձևակերպմամբ Շլեգելը մեկ այլ տեղում *հեզնանքը* բնութագրում է որպես «մշտական հարաբազիս» և, դրանով իսկ, որպես *մշտական ընդհատում*:²⁴

Երկում նման հարաբազիսային *ոչնչացում* ու *ծայրահեղ անսանձարձակություն*, որը Տիկի կատակերգություններում հավանաբար զուր կլիներ փնտրելը, նախևառաջ տեղի է ունենում երկի վերջում, երբ Գրաբեն թույլ է տալիս իր իսկ երևան գալը և իր կերպարների կողմից պախարակվելը: Ծրջելով ստեղծողի և կերպարների միջև ենթադրվող ավանդական հարաբերակցությունը՝ կերպարներն անգամ փորձում են ընդհանուր առմամբ խանգարել իրենց հեղինակի հանդես գալուն և առանց այլևայլության պարզապես դուրս են վտարում նրան: Այսպես, ուսուցիչը նման կերպով է արտահայտվում Գրաբեյի մասին. «Սա անիծված Գրաբեն է կամ, ինչպես իրեն հարկ է անվանել, թզրուկ ծո-

22 Հմտ. որպես պարեքբազ՝ Պաուլ դե Մանը անվանում է այն երևույթը, երբ պատմողը գիտակցում է ինքն իրեն. դա այն հեղինակն է, որը ներգրավվում է պատմության մեջ և դրանով ոչնչացնում է այն պատրանքը, որն արձակվում է մտացածրի միջոցով: Sten de Man, Paul: Die Rhetorik der Zeitlichkeit, in: ders.: Die Ideologie des Ästhetischen. Frankfurt am Main 1993, S. 116

23 Schlegel 1958-1995, Bd. 5, S. 88; NÜŦ. Hamacher 1998, S. 222f.

24 Schlegel 1958-1995, Bd. 18, S. 85; NÜŦ. de Man 1996, S. 179.

վախեցգետինը»²⁵ այս երկի հեղինակը. նա այնքան անխելք է, ինչպես կովը, նա պախարակում է բոլոր գրողներին, սակայն իրենից ոչինչ չի ներկայացնում. ծուռ ոտքեր ունի, շիլ աչքեր և կապիկի անհետաքրքիր երես: Փակե՛ք իր առջև դռները, պարոն բարոն, փակե՛ք իր առջև դռները»²⁶:

Այս բավական կոպիտ դրվագը ոչ միայն երկի ոչնչացում է, այլ միաժամանակ այս նույնի, այսպես կոչված, «մետագրական» կամ «մետառեֆլեքսիվ» մեկնաբանությունը: Ի տարբերություն Տիկի կատակերգությունների հարաբազիսի՝ այստեղ վերջինս չի հանգեցնում կերպարի իր իսկ գոյության եղանակի մասին ռեֆլեքսիային, այլ այն խորհրդածում է բոլոր կերպարների սահմանափակության և կուրուքյան մասին և դրանով իսկ խորհրդածում է իր ռեֆլեքսիայի ձախողման մասին²⁷: Սա դերասանի «դերից դուրս գալն» է, որը երբեմն նաև թյուրմբոնվել է իբրև կերպարի՝ *որպես կերպար*՝ «ինքնագիտակցության» ձեռքբերման իմաստով²⁸, սակայն այստեղ այն հանդես է գալիս որպես գիտակցության յուրաքանչյուր ձևի և ռեֆլեքսիայի *պակասի* ցուցադրություն: Շլեգելյան ընկալմամբ հեգնանքի նկատառումով խոսքն այստեղ բացասական հեգնանքի մասին է: Ի վերջո ոչ միայն «թգրուկ ծովախեցգետինը», այլև երկի բոլոր կերպարները իրենց ուրախությունը գտնում են նրանում, որ պախարակում են *բոլոր գրողներին*: Ինչպես Գրաբեն, այնպես էլ իրենք են ընկնում ներքին հակասության մեջ՝ *լինելով* «անխելք, ինչպես կով» և չարտաբերելով ոչինչ՝ բացի ավելորդ խոսքերից:

Այս ներքին հակասությունը Գրաբեի պիեսը արտապատկերում է մանրամասնորեն և տարբեր վարիացիաներով: Հեղինակի «Կատակ, երգիծանք, հեգնանք և խորը նշանակություն» երկն ի սկզբանե գրականության և միաժամանակ գրական երգիծաբանների հեգնանքն է:

25 “Grabbe”-“Krabbe” գերմաներենում իրենից բառախաղ է ներկայացնում:

26 Grabbe, Christian, Dietrich: Scherz, Satire, Ironie und tiefe Bedeutung. Ein Lustspiel in drei Aufzügen. Stuttgart: Reclam 1970 [1943]. S. 64.

27 Հմմտ. Schnell, Ralf: Das Lustspiel als Trauerspiel. Zur ironischen Struktur von Grabbes Komödie “Scherz, Ironie, Satire und tiefe Bedeutung”. In: Werner Broer/Detlev Kopp (Hrsg.): Christian Friedrich Grabbe (1801-1836). Ein Symposium. Tübingen: Niemeyer 1987. S. 78-94, S. 85 f.

28 Հմմտ. Szondi, Peter: Friedrich Schlegel und die romantische Theorie. Mit einem Anhang über Ludwig Tieck. In: “Euphorion. Zeitschrift für Literaturgeschichte” 48 (1954), S. 397-411, S. 410.

«Բնապատմաբանները», որոնք առաջին ակտի երրորդ դրվագում խոնարհվում են սառցակալած սատանայի առջև, սկզբից նրան՝ «աստվածային տգեղության պատճառով, որն աչքի էր զարնում այդ դեմքի յուրաքանչյուր միմիկայից», շփոթում են «գերմանացի գրողի»²⁹ հետ: Այդ նույն դրվագում կերպարները ծաղրում են «ծովատառեխի գրականությունը», որն ուսուցիչը միայն այն պատճառով է կարդում, որովհետև նրան իր զարմիկը «կիսահոտած տառեխներ» է ուղարկում, որոնք նա «զգուշորեն փաթեթավորում է թշվառ պոետիկական երկերի և ամսագրերի թարմ տպագրված թերթերի մեջ»³⁰:

Այն, որ Գրաբեն կերպարների շուրթերով երգիծական ռեպլիկներ է բաց թողնում, դեռ չի նշանակում, որ նա ինքն իրեն դուրս է մղում այդ սուր բանավեճից: Քննադատական կարծիքները «կանացի գրողների», «գրախոսների», «նոր գրողների» (“neue Skribenten”) և «հանգեր ստեղծողների» (“die Reimschmiede”), «նեոռոմանտիկական դպրոցի գրվածքների» մասին միավորվում են այն բամբասանքին, որն իրենք կարծես թե *պախարակում են*: Սա ականառու է դառնում երկի այն դրվագում, երբ պոետ Ռաթենգիֆտը³¹ բանաստեղծություն է գրում իր՝ բանաստեղծություն գրելու անկարողության մասին:

«*Ռաթենգիֆտը /ստատած է սեղանի մոտ, պատրաստվում է ստեղծագործել/*: Ախ, մտքերը: Հանգերը կան, սակայն մտքերը, մտքերը: Ահա ես նստած եմ, սուրձ եմ խմում, կրծում եմ փետուրները, գրում եմ, ջնջում եմ և չեմ կարող որևէ միտք գտնել, ոչ մի միտք: - Հա, ինչպե՞ս ես դա ընկալեմ: - Կա՞նգ առ: Էս ի՞նչ է գալիս մտքիս: - Հիասքանչ: Աստվածային: Հենց այն մտքի մասին, որ ես գաղափար չունեմ, ես ուզում եմ սոնետ գրել: Եվ, իրապես, այս՝ գաղափար չունենալու մասին միտքը ամենատաղանդավոր միտքն է, որը միայն կարող էր մտքիս գալ»³²:

Զարմանալի չէ, որ Ռաթենգիֆտի՝ գաղափար չունենալու մասին բանաստեղծությունները Գրաբեի երկում ձղձիմության ու անիմաստության գազաթնակետին են հասնում: Նրա կերպարներից յուրաքանչյուրին վերաբերում է այն, ինչ Վալտեր Բենիամինն ասել է Ռոբերտ

29 Grabbe 1970 [1943], S. 11.

30 Ebd., S. 16.

31 Թարգմանաբար նշանակում է առնետների թույն:

32 Ebd., S. 29/.

Վալզերի մասին. «Դեռ գրիչն իր ձեռքը չառած՝ նրան համակում է չափազանց հանդուգն տրամադրություն. ամեն բան թվում է կորցված, խոսքերի հեղեղ է թափվում, որտեղ յուրաքանչյուր նախադասություն կարծես թե իր առջև խնդիր է դնում մոռացության մատնելու նախորդը»³³:

Լկարագրվածը հիշեցնում է Գրաբեի երկի մթնոլորտը, ուր միապաղաղությունը ցրելու համար վերացական մի իրավիճակ փոխարինում է մյուսին, յուրաքանչյուր նախադասություն մոռացության է մատնում նախորդը, և գաղափարների բացակայությունը մնում է միակ գաղափարը: Այս իմաստով Զլեգելը գրում է իր «Միֆոլոգիայի մասին ծառում», այն է՝ ռոմանտիկական գրականության նպատակը պետք է լինի «բանական մտածող բանականության գործընթացն ու օրենքները վերացնելը և մեզ ֆանտազիայի գեղեցիկ շփոթմունքի մեջ ընկղմելը»³⁴:

Գրաբեի «Կատակ, երգիծանք, հեգնանք և խորը իմաստ» կատակերգությունը Զլեգելի հեգնանքի տեսության կիրառումն է դրամատիկական երկում, ուր մատնանշվում է այն, որ նոր գրականության մասին բամբասանքի *պախարակումը* վերածվում է այն նույն բամբասանքի: Դա ի վերջո վկայում է լեզվի տիրույթում և դրանով իսկ «մետագրականության» ասպարեզում ինքնախորհրդածման անիրականանալիության մասին:

Բանալի բառեր. - խորհրդածում, մետագրականություն, ռոմանտիկական գրականություն, ինքնախորհրդածող պոեզիա, ինքնահայեցում, մետախորհրդածում, բացասական մետառեֆլեքսիա, հեգնանք:

33 Benjamin, Walter: Robert Walser. [1929] In: ders.: "Illuminationen. Ausgewählte Schriften I". Frankfurt a. M.: Suhrkamp 1977, S. 349-352, S. 350.

34 Schlegel 1958-1995, Bd. 2, S. 311 f.

ЕЛЕНА ЭТАРЯН
Металитература и романтическая ирония

Резюме

Предметом исследования данной статьи является проблема саморефлексии литературы, которая представляет интерес не только для истории литературы, но и для понятия "метаязыка". В нашем исследовании мы, в основном, опираемся на теоретические труды Фридриха Шлегеля, по мнению которого литература - ни что иное как "метарефлексия". В связи с этим в статье исследуются проблемы и задачи литературы эпохи романтизма, а также прослеживается связь между ней и металитературой. Особое внимание уделяется в статье проблеме "романтической иронии" и ее освещению в пьесе Габбе "Шутка, ирония, сатира и глубокий смысл (1827)", которая представляет собой практическое применение теории "романтической иронии" в драматическом произведении.

Ключевые слова: поэзия, романтическая литература, самоутверждение поэзии, самовосстановление, тайна, отрицательное мета-отклонение, ирония.

YELENA ETARYAN
Meta-Literature and Romantic Irony

Summary

The subject of investigation in this article is the problem of self-reflection of literature, which is of interest not only for the history of literature, but also for the concept of "meta-language." In our study, we mainly rely on the theoretical works of Friedrich Schlegel, according to whom literature is nothing more but "meta-reflection." In this regard, in the article the problems and the tasks of literature of the Romantic era are investigated, and also the relationship between the era and the meta-literature is traced. Particular attention is paid to the problem of "romantic irony" and its coverage in Grabbe's play "Wit, Satire, Irony and Deeper Meaning" (1827), which is a practical application of the theory of "romantic irony" in a dramatic work.

Keywords: poetry, romantic literature, self-affirming poetry, self-exclamation, mystery, negative meta-deflexion, irony.